ՀՈՎՀԱՆ ՄԱՅՐԱԳՈՄԵՑՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Հ. Մ. ՔԵՆԴԵՐՅԱՆ

Հովհան Մայրագոմեցու կյանքի ու գործունեության մասին եղած տեղեկությունները սակավ են ու հակասական։ Սկզբնաղբյուրները, որոնց հիման վրա հայագետ բանասերները ջանացել են ուրվագծել նրա կյանքի ուղին՝ հայկական, հունական և վրացական, հետևյալներն են.

1. «Պատմութիւն Յոհաննու Մայրագոմեցւոյ» պատառիկը։ Գտնվում է Երուսաղեմի № 1272 ձեռագրում (ՉԼԹ—1290, գրիչ՝ Բարսեղ քահանա, թ. 391բ—396բ)։ Գարեգին Հովսեփյանը մի ուսումնասիրությունի հետ հրատարակել է այդ «Պատմությունը»[1]։ Գիտնականը հանգել է այն եզրակացության, որ կիսատ մեզ հասած այս գործը գրվել է 7-րդ դարի վերջին կամ 8-րդ դարի սկզբին։

Այս գրվածքի հետ ընդհանրություններ ունեն՝

ա) Ստեփանոս Օրբելյանի տեղեկությունները,

բ) Զաքարիա Մործորեցու «Ժողովոց պատմութիւնը»,

գ) Խորեն Սահառունու «Ժամանակագրութիւն վարդապետացն հայոց» գործը։

Վերջին երկու գործերը ձեռագրերի մեջ դեռևս երևան չեն բերված, բայց նրանց մնացորդներից օգտվել է Չամչյանը։

2. La Narratio de rebus Armeniae: Առաջին անգամ հրատարակել է Կոմբեֆիսը 1648 թ., այնուհետև՝ Գալանդիուսը 1781 թ., ապա 1864 թ. երկու անգամ լույս է ընծայել Մինյեն։ Այս բոլոր հրատարակությունները միևնույն բնագրից են, որը աղավաղված է։ 1952 թ. բելգիացի գիտնական Ժերար Գարիտը Վատիկանի գրադարանի երկու ձեռագրերի և նախորդ հրատարակությունների համար օգտագործված բնագրի ու հայկական, հունական և վրաց աղբյուրների քննական համեմատությամբ, հրատարակեց Narratio-ն կամ Ցուցակը[2]։

3. Փոտ պատրիարքին վերագրված նամակը ուղղված հայոց Զաքարիա կաթողիկոսին (9-րդ դար)[3]։

4. Վրաց Արսեն Սափարացի կաթողիկոսի «Վրաց և հայոց բաժանման մասին» գրվածքը (9-րդ դար)[4]։

5. «Հացունյաց խաչի պատմությունը» հրատարակված է Շապուհ Բագրատունուն վերագրված «Պատմության» մեջ, բայց կա նաև ձեռագրերում որպես առանձին մի գործ[5]։

6. Թեոդորոս Քռթենավորին վերագրվող «Ընդդէմ Մայրագոմեցւոյն» ճառը։ Հրատարակվել է Օձնեցու մատենագրություններում[6]։

7. Եվթիմիոս Սիգաբինոսի «Պանոպլիան» և Նիկեփորոսի «Պատմությունը» օգտագործել է Կղեմես Գալանոսը[7]։

---

[1] «Արարատ», 1917, էջ 735—749։

[2] Gerard Garitte, La Narratio de rebus Armeniae, edition critique et commentaire. Corpus scriptorum Christianorum Orientalium, vol. 132, Subsida tome 4։ Հայերեն թարգմանությունը Narratio-ի կատարել է Հ. Բարթիկյանը։ Տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 6, Երևան, 1962, էջ 457—470։

[3] Православный палестинский сборник, том XI, СПБ, 1892.

[4] Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր Ա, Երևան, 1934։

[5] Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, էջմիածին, 1921։

[6] Թէոդորոս Քռթենաւոր, «Ընդդէմ Մայրագոմեցւոյն», Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ մատենագրութիւնք, Վենետիկ, 833, էջ 147—158։

[7] Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն Հայոց եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռովմայ, Հռոմ, 1658, հ. 2, մասն 1-ին։

8. Տեղեկություններ կան նաև հայ պատմիչների երկերում։ Աղբյուրները ինչպես տեսնում ենք, շատ են, բայց, իրոք, քիչ տեղեկություններ են տալիս Հովհանի մասին և ենթադրությունների համար մեծ տեղ են թողնում։

Սկսենք անվանումից։ Մատենագրության մեջ Հովհանը հայտնի է Մայրագոմեցի և Մայրավանեցի անվանումներով։ Ո՞րով է հորջորջվել Հովհանը իր կյանքի այն օրերին, երբ բոլորի կողմից միայն հարգանքի ու պատվի էր արժանանում։ Հայագետները ինչպես այս, այնպես էլ Հովհանի ստեղծագործությունների պատկանելիության ու շատ այլ հարցերում, երկու խմբի են բաժանված։ Ոմանք ասում են, որ Հովհանը կրել է Մայրավանեցի մականունը և միայն հետագայում նրան կոչել են Մայրագոմեցի։ Ուրիշները կարծում են, որ, ընդհակառակը, Մայրագոմեցի է եղել, հետո միայն անվանել են Մայրավանեցի։

Անվանումներից յուրաքանչյուրի կողմնակիցները բերում են իրենց մատենագրական կռվանները։ Մատենագրության մեջ հանդիպում է և՛ մեկ, և՛ մյուս անվանումը։

Որո՞նք են Մայրագոմեցի անվանումը ճիշտ համարողների կռվանները։

1. Օտար աղբյուրները՝ հունական և վրացական, Մայրագոմեցի անվանումն են գործածում։

2. «Վերլուծութիւն կաթողիկէ եկեղեցւոյ և որ ի նմա կարգաց» 10—11-րդ դարերի գրչությամբ հասած ձեռագրի վերտառության մեջ «Յոհաննու Մայրագոմեցւոյ» է գրված։ Այս գործի Հովհանին պատկանելը առ այսօր ոչ ոք կասկածի տակ չի առել[8]։

3. «Կնիք հավատոյ» ժողովածուի Հովհանին պատկանող հատվածները ունեն «Յոհաննու Մայրագոմեցւոյ» խորագրերը[9]։

4. Կա կիսատ մեղ հասած մի գործ, որ հրատարակել է Գարեգին Հովսեփյանը, «Պատմութիւն Յոհաննու Մայրագոմեցւոյն» վերնագրով[10]։

5. «Հացունյաց խաչի պատմության» մեջ Հովհանը Մայրագոմեցի է անվանված։

Ահա և Մայրավանեցի անվանումը ճիշտ համարողների կռվանները.

1. Հովհաննես Դրասխանակերտցու Պատմության մեջ կա այսպիսի մի հատված. «Եւ զայս ասացնալ՝ ելեալ գնաց։ Եւ երթեալ (Հովհանը— Հ. Ք.) առկայանայր ի Մայրոյ վանս, որ ի ծործորս լերինն ամրոցին Բշնւոյ. և սակս ի նմա բնակելոյն Յոհաննու փոխեալ Եզրի զանուն տեղւոյն Մայրոյ վանաց, Մայրեզոմ զնա անուանէր, և զՅոհան՝ Մայրոզոմեցի»[11] (ընդգծումը մերն է — Հ. Ք.)։

2. Հետագա դարերում մատենագրության մեջ ոմանք գործածում են Մայրավանեցի անվանումը։

3. «Խրատ վարուց» ժողովածուի Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում գտնվող հինգ ձեռագրերում որպես հեղինակ նշված է Մայրավանեցին։

Կան նաև Մայրաղումարևցի[12] և Գոմնեցի[13] անվանումները։ Առաջինը եթե գրչական սխալ չէ, ապա խուսանավում է Մայրագոմեցի ձևից՝ ի նշան հարգանքի սուրբ հոր հիշատակին։ Երկրորդը՝ Գոմնեցի անվանումը, հաստատումն է Մայրագոմեցի անվանման։

Փորձենք տեսնել, թե ո՞ր անվանումն ավելի նախնական է և հիշյալ կռվաններից որո՞նք են հիմնավոր, կամ որո՞նց կարելի է ավելի հավատ ընծայել։

Օտար աղբյուրների Մայրագոմեցի անվանումը կարևոր է հենց այն պատճառով, որ նրանց համար այդ անվանումը ոչ մի այլ իմաստ չէր պարունակում (չէր կապվում Գոմ-ի հետ). նրանք այն ըմբռնում էին որպես սովորական մի անուն, այլապես հակառակորդին անարգելու այդքան լավ բառախաղը դժվար թե աննկատ թողնեին։

Եզրի օրոք որպես անարգանքի նշան փոփոխված չի եղել Մայրավանեցի անվանումը, այլապես 10—11-րդ դարերում նրա հիշատակը հարգող մարդիկ «Վերլուծութիւն կաթողիկէ եկեղեցւոյ...» գործի հեղինակի անունը Մայրավանեցի կգրեին և ոչ թե Մայրագոմեցի կթողնեին։

---

8 Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի № 2244 ձեռագիր։

9 «Կնիք հաւատոյ», Վաղարշապատ, 1914։

10 «Արարատ», 1917, էջ 735—749։

11 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 77—80։

12 «Անանուն ժամանակագրություն» (14-րդ դար), կազմեցին Հովհ. Մանվելյան, Հար. Աբրահամյան, Երևան, 1940, էջ 14։

13 Մեսրոպ վրդ. Քեշիշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, Վիեննա, 1964, ձեռ. № 96, թ. 36բ։

Նույնը պետք է ասել նաև «Կնիք հաւատոյ»-ում զետեղված հատվածների մասին, որոնք վերագրված են «երիցս երանեալ սրբոյն Յովհաննու Մայրագոմեցւոյ»։

«Պատմութիւն Յոհաննու Մայրագոմեցւոյն» գործը լինելով հնաղույններից մեկը և նրա հեղինակը մեծագույն հարգանքով խոսելով Հովհանի մասին՝ Մայրաղոմեցի անվանման մեջ ոչ մի վիրավորական բան չի տեսնում։ Նույնը պետք է ասել և «Հացունյաց խաչի պատմության» մասին։

Պատմիչները Մայրավանեցի են անվանում նկատի ունենալով Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդած ավանդությունը, դա անմիջապես նկատվում է, այլապես Հովհան են ասում, կցելով փակակալ Գրիգորի, կամ փիլիսոփա լրացումները։

Մայրավանեցի անվանումը, որ առաջինը շրջանառության մեջ է դրել Հովհաննես Դրասխանակերտցին, կապվում է Բշնու ծործորներում ծվարած մի վանքի հետ, որի փլատակ եկեղեցին այսօր էլ գոյություն ունի և կրում է Սուրբ Աստվածածին անունը։ Ահա թե ինչ է գրում այդ վանքի մասին Հովհաննես Շահխաթունյանցը.

«Ի Բշնոյ։ աստի ի վեր ընդ գետն իբրև ժամ մի է զիւղն Սօլակ կոչեցեալ յարևելեան սարահարթի անդ ձորոյն և ի մէջ ձորամիջի անդ է ևս կամուրջ փայտեայ. հանդէպ այսր գեղջ յարևմտեան կողմն գետոյն ի բարձրութեան անդ ի ծործորս լերինն կարի դժուարին ելիւք ի տափարակ գիրս է տաճար փոքրիկ ի սրբատաշ ամրակուռ քարանց և շուրջ զնովաւ աւերակք սենեկաց. չգտաւ թուական շինութեանն, այլ երկու արձանագիրք յանուն նուիրատուաց...

Այս տեղի է Մայրու վանք կոչեցեալն ի գիրս զորմէ գրեն պատմիչք՝ մերձ ի Բշնի ի ծործորս լերինն, ըստ զ. Յովհաննու կաթուղիկոսի, յոր և բնակեցաւ ծերունին Յոհան յաւուրս կաթուղիկոսութեան Եզրի. և նա ինքն Եզր յաղագս ատելութեանն առ Յոհան՝ փոխեաց զանուն այսր մենաստանի և կոչեաց Մայրոգոմ և զՅոհան Մայրոգոմեցի»[14]։

Այս վանքի հետ պատմական քիչ թե շատ նշանավոր մի այլ դեպք չի կապվում։

Մայրաղոմեցի անվանման ավելի նախնական լինելը առաջինը պնդող Կարապետ եպիսկոպոսը, չընդունելով հանդերձ բառախաղի հետ կապված ավանդությունը, նույնպես այդ նույն վանքի հետ է կապում այն և կարծում է, որ վանքը 7-րդ դարում Մայրաղոմ էր կոչվում։ Այս վանքի հետ Հովհանի անվանումը կապելու համար բավարար հիմքեր չկան, և, ահա թե ինչու։

Պատմության մեջ շատ են, իհարկե, այն օրինակները, երբ քիչ թե շատ հայտնի դեմքերի անվանումներն այն վանքի հետ են կապվում, ուր նրանք քաշված են եղել, կարող էր այդ ձևով նաև Հովհանինը լինել, եթե Հովհանի կյանքի նշանակալից մասը անցած լիներ այդ վանքում, բայց նա շատ կարճ ժամանակ է եղել այդտեղ, հազիվ հաստատված՝ ստիպված է եղել հեռանալ և նույն Հովհաննես Դրասխանակերտցու վկայությամբ «չուէ գնայ ի գաւառն Գարդմանայ. և անդ ապա խստամբեր վարս իւր ստացեալ՝ նեղ և անձուկ պողոտայիւ հետևի զկնի ամենայն առաքինի վարուց»[15]։ Իսկ Կիրակոս Գանձակեցին չի հիշում նույնիսկ, որ Հովհանը Բշնու ծործորներում գտնվող վանքում իջևանած լինի. այդ բախումից հետո «երթեալ Յովհաննու ընտրեաց իւր տեղի լռութեան ի կողմանս Գետարակս, և անդ դադարեալ՝ հանապազ ընդ աստուծոյ խօսելով»[16]։ Ստեփանոս Օրբելյանը նույնպես չի հիշում, որ վերոհիշյալ Մայրավանքը քաշված լինի Հովհանը, որին նա միայն Մայրաղոմեցի է անվանում և բառախաղի մասին ակնարկ իսկ չի անում։ Հովհանի մասին հիշատակություն թողած հայ մյուս պատմիչները ևս չեն ասում, որ նա վերադարձած լինի Մայրո վանք։ Օտար աղբյուրներից Փոտը, յուր նամակում՝ ուղղված հայոց Զաքարիա կաթողիկոսին 9-րդ դարում, և վրաց կաթողիկոս Արսեն Սափարացին հաղորդում են, որ Մայրաղոմեցին հալածվել է Ներսես Շինող կաթողիկոսից, աղվեսադրոշմով խարանվել ու աքսորվել է Կովկասի լեռը, հետագայում՝ Անաստասի օրոք, վերադարձել ու մահացել է Մայրո վանքում։

Կարապետ եպիսկոպոսը իրավացիորեն շփոթության արդյունք է համարում օտար աղբյուրների այդ հաղորդումը, ասելով, որ 652 թվականին «ոչ մի հավանականություն չկա, որ... Մայրագոմեցին կենդանի լիներ, ուրեմն հակառակություն հանողը նորա աշակերտներն էին, որոնք և հալածվել ու Ներսեսի մահից հետո վերադառնալով՝ իրենց քարոզչությունը շարունա-

---

14 Յովհաննես Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթուղիկէ էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, էջմիածին, 1842, էջ 188—189։

15 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 77—80։

16 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 54—56։

կել կարող էին»[17]։ Ուրեմն՝ ըստ հայկական աղբյուրների, Հովհանը Մայրո վանքում կամ անանշան ժամանակամիջոց է մնացել ու քաշվել Դարղման, կամ բոլորովին չի եղել, իսկ ըստ օտար աղբյուրների՝ նա վերադարձել է Անաստաս կաթողիկոսի օրոք, որը ճիշտ չէ։ Ի՞նչ հիմք է ունեցել ուրեմն հմուտ բանասերը՝ հաստատելու այն վարկածը, որ Հովհանը մինչև կյանքի վերջը Մայրո վանքում է մնացել։ Այդպիսի հիմք չկա։ Ի դեպ, եթե ստույգ է բառախաղը, ավելի ճիշտ կլինի կարծել, որ Հովհանի կրած Մայրագոմեցի անվանման վրա է խաղացել Եզրը և նրանով է վանքը պիտակել, ինչպես Եզրի անվան հետ բառախաղ անելով Հովհանը ասում է՝ հիրավի Եզր կոչվեցիր, որովհետև քանդման եզրին հասցրեցիր Հայաստանյան եկեղեցին։

Ուստի, եթե նույնիսկ վանքը 7-րդ դարում Մայրագոմ կոչված լիներ, ինչպես ենթադրում է Կարապետ եպիսկոպոսը, շատ աննշան մի ժամանակամիջոց այնտեղ ապաստանած կամ էլ նույնիսկ բոլորովին այնտեղ չեգած Հովհանը այդ վանքի անունով հազիվ թե անվանվեր։

Ի դեպ, մատենագրության մեջ հիշյալ վանքը ոչ մի անգամ Մայրաղոմ անունով չի հիշատակվել, մի բան, որ նույնպես Հովհանի Մայրագոմեցի անվանումը վանքի հետ կապելու հնարավորությունը բացառում է։

Շատ ուշ շրջանի մատենագրության մեջ՝ Ղազար Ճահկեցու մոտ և մի քանի հարցմունքներում, Հովհանը Մայրավանեցի է անվանված, բայց շատ ակնհայտ է, որ բառախաղին հավատք ընծայելու հետևանք է այդ անվանման դրդումը։

Ամենից ավելի ծանրակշիռ փաստարկումը «Խրատ վարուց» ժողովածուի Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում գտնվող հինգ ձեռագրերի Մայրավանեցու անունով լինելն է։ Բայց դրանք բոլորն էլ ավելի նոր գրչությամբ են, քան վերոհիշյալ մյուս գործերը, բացի այդ, ինչպես կերևա հետագայում, «Խրատ վարուց» ճառերի ձեռագրերի նկարագրությունից, Մայրագոմեցի անվանումը չէր կարող չփոփոխվել հենց միայն այն պատճառով, որ եկեղեցու կողմից մերժված մի աղանդի անվանումն էր։ Այս կարծիքի հաստատման վկայությունը կարող է լինել Երուսաղեմի № 1999 ձեռագիրը, որ «Սիոնում» շարունակաբար հրատարակել է Ե. Ե. Դ.-ն (Եղիշե եպիսկոպոս Դուրյանը). այստեղ հեղինակի անունը «քերած-ջնջած» է, որի մասին հրատարակիչը, իսկ ավելի շուտ Գարեգին Հովսեփյանը այն կարծիքն են հայտնել, թե Մայրագոմեցու անունը վերացնել ջանացող մի մոլեռանդի ձեռքի գործ է։

Այս բոլորը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ Հովհանը իր փառքի օրերին Մայրավանեցի չի կոչվել, այլ Մայրագոմեցի։

Մայրագոմեցի անվանումը, կարծում ենք, որ Հովհանի ծննդավայրն է ցույց տալիս։ Սակայն մեզ ծանոթ տեղանունների մեջ, առ այսօր, չկա Մայրագոմը։ Կա միայն այն հիշեցնող մի տեգանուն, Մարագումն է դա, մի սարահարթ, որի մասին Հ. Ներսես Սարգիսյանն այսպես է գրում. «Ի մէջ լերանց կողմանցս այսոցիկ առաջին համարի Մարաղում լեառն ոչ այնքան բարձրութեամբ քան թէ տարածութեամբ... Սեբաստացւոց քաղաքն կառուցեալ կայ ի դաշտավայրի, առ ստորոտով Մարագում լերին, Ալիս գետոյ կիսաժամաւ ի բացեայ անցանելով ընդ կամուրջ մի նորա բազմակամար»[18]։

Մատենագրության մեջ Մայրագոմ տեղանվան չգոյությունը, իհարկե, չի կարող պատճառ հանդիսանալ, որ այդպիսի տեղանվան ընդհանրապես գոյություն ունեցած լինելը բացառվի։ Մայրագոմը շատ հայեցի կազմություն ունեցող բառ է և «գոմ» վերջավորությամբ տեղանուններ կան հայոց աշխարհագրական բառարանում, հիշենք, թեկուզ, Շաղագոմը, որ մի ամբողջ գավառ էր։ Ըստ Հյուբշմանի, «գոմ» նշանակում է նաև շեն, գյուղ։ Այս նշանակությամբ «գոմը» կարող էր լինել և եղել է շատ տեղանունների բաղադրիչը։ Մայրագոմը, ինչպես մեզ հուշեց բյուզանդագետ Հ. Բարթիկյանը, շատ է նման նաև հունական μητραχωμια -ին, որ թարգմանաբար մայրավան է, նշանակում։ Հուստինիանոսի տիրապետության տակ գտնվող հայկական հողերում μητραχωμια-ն վարչական մի նոր միավոր էր, որ կարող էր թարգմանվել ինչպես մայրավան, այնպես էլ մայրագոմ, դույզն իսկ չափով չհիշեցնելով «գոմի» այսօրվա իմաստը։

Այս Մարաղում տեղանունը, Հուստինիանոսի սահմանած վարչական միավոր μητραχωμια -մայրավան-մայրագոմը դուռ են բաց անում մի ենթադրության՝ արդյո՞ք Հովհան

---

17 Կարապետ եպիսկոպոս, Յովհան Մանդակունի և Յովհան Մայրագոմեցի, «Շողակաթ», էջմիածին, 1913, էջ 112։

18 Հ. Ներսէս Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս, Վենետիկ, 1864, էջ 462։

Մայրագոմեցին ծնունդով Բյուզանդական Հայաստանից չէր։ Հովհանի ծննդավայրի մասին առայժմ ոչ մի վարկած չկա, սա էլ, տակավին, ավելի ամուր փաստերի կարիք ունի։

Ե՞րբ է ծնվել Հովհան Մայրագոմեցին։

Մատենագրության մեջ Հովհանի ծննդյան թվականը չի հիշատակվում։ Այն մոտավորապես որոշելու համար բանասերները դիմել են Հովհանի գործունեության հետ կապված տարեթվերին, պատահել է և՝ մահվան թվականին (Քիպարյան)։ Այլ կերպ վարվել հնարավոր էլ չէ։ Սկզբնաղբյուրներում տարբեր տվյալներ կան։ Մի տվյալի շուրջ գրեթե բոլոր սկզբնաղբյուրները համաձայն են. Հերակլի հրավիրած Կարնո ժողովի ժամանակ, Եզրը համաձայնություն է տվել առաջարկված մի կամքի և երկու բնության դավանությանը, իսկ նրան հակառակ դիրք է բռնել Հովհանը։ Դա տեղի է ունեցել 634 թվականին։ Այսպես են ասում և՛ «Պատմութիւն Յոհաննու Մայրագոմեցւոյն» ու Փոտ պատրիարքը, և՛ Հովհաննես Դրասխանակերտցին ու Ասողիկը, և՛ Օրբելյանն ու Արսեն Սափարացին, և՛ մյուս սկզբնաղբյուրները։ Հովհանի եռուն գործունեության շրջանը սկզբնաղբյուրների մեծ մասի համաձայն եղել է Կոմիտաս կաթողիկոսի ղահակալության ժամանակը, որ է 615-ից 628 թվականը։ Ըստ Մովսես Կաղանկատվացու և Ստեփանոս Օրբելյանի, Աբրահամ կաթողիկոսի օրոք էլ՝ 607-ից 615 թվականը, կաթողիկոսարանի հեղինակավոր հոգևորականներից էր Հովհանը։ Ղալաթիո ազգային Մատենադարանի հայոց ձեռագրերի ցուցակի № 154 ձեռագրում (նոտրգիր, տեղ, ղրիչ, ժամանակ անհայտ) կա այսպիսի մի տվյալ. «Առաջին ամին որ եղան թվականն Հայոց վերադիրն Գ. էր։ Յայտնութիւնն Արա» Լ.։ Գիր տարոյն Յ.-ին։ Հասարակածն Ահեկի ԺԴ.։ Լրումն Ջատկի Մարերի Է.։ Պատկեր օրն կիրակի է։ Երբեակն Դ.։ ԺԸ եպիսկոպոսք ժողովեցան ի Դուին քաղաքն եղին և կազմեցին զթվականն, որոց գլխաւորքն էին այսոքիկ. Անանիայ Շիրակացին և Մովսէս կաթողիկոսն և Յովհան Մայրագոմեցին»[19]։

Այս հաղորդմանը հավատ ընծայելը դժվար է, որովհետև Անանիա Շիրակացին, որին նույնպես հայկական թվագրությունը հաստատողների շարքում է դասում ձեռադիրը, շուրջ 3 տասնամյակ հետո դեռ նոր աշխարհ պետք է գար, հետաքրքրական է, սակայն, որպես փաստ այն, որ հայոց պատմության այդ նշանավոր երևույթը կապում են նաև Հովհանի անվան հետ։ Անանիա Շիրակացու անվան հետ կապելը հասկանալի է, Շիրակացին տոմարագետ էր, արդյո՞ք Հովհանը հեղինակություն էր նաև նման հարցերում։

Եթե 607—615 թվականներին Հովհանը հեղինակություն էր կաթողիկոսարանում, ուրեմն հասուն մարդ պետք է եղած լիներ՝ գոնե երեսունն անց։ Այս հաշվով նա պիտի ծնված լինի մոտավորապես 575—580 թվականներին։

Ըստ հ. Ներսես Ակինյանի[20], Հովհանի ծննդյան թվականը 610-ն է։ Մի բան, որ հակասում է սկզբնաղբյուրներին։ Հ. Կ. Քիպարյանը «Յոհան Մայրավանեցի (կոչված նաև Մայրագոմեցի)» հոդվածում Հովհանի ծննդյան մոտավոր թվականը համարում է 605-ը։ Հիմքը Արսեն Սափարացու այն հաղորդումն է, որ Հովհանը մահացել է 684 թվականին։

Հովհանի մահվան թվականի մասին, ինչպես արդեն այլ առիթով ասացինք, Կարապետ եպիսկոպոսը դրում է. «Երբ Կոստանդ կայսրն անձամբ Հայաստան եկավ և Դվինում միությունը վերահաստատեց (652 թ.), իսկ այդ միության դեմ նույպիսի ընդդիմություն առաջ եկավ, որպիսին Եզրի օրով և որովհետև ոչ մի հավանականություն չկա, որ այդ ժամանակ Մայրագոմեցին լիներ, ուրեմն հակառակություն հանողը նրա աշակերտներն էին...»[21]։

Ըստ Փոտի՝ Հովհանը Ներսես Շինողի մահից հետո վերադառնում է Կովկասից և անում ինչ որ ցանկանում էր, իսկ Արսեն Սափարացին ու Narratio-ն Հովհանի Կովկասից վերադառնալը դնում են Անաստասի մահից՝ այսինքն՝ 668-ից հետո։ Արսեն Սափարացին Հովհանի մահվան որոշակի թվականն էլ է ասում՝ 684-ը։

Հայկական ոչ մի աղբյուր Հովհանի վերադարձը չի հիշատակում, «Պատմութիւն Յոհաննու Մայրագոմեցւոյ» գործում էլ այն հատվածը, որտեղ ասվում է, թե «Եկն Մաթուսաղայ ի Սիւնեաց և ընկալաւ ձեռնադրութիւն եպիսկոպոսութեան յԵզրէ և միաբանեցան ամենեքեան և միահաւատ եղեն, և հոետորաբանէր յայնմհետէ Թեոդորոս Մաթուսաղայեան և ներբողումն առնէր գովեստական բանիւք ժողովոյն Քաղկեդոնի և հնազանդէին նմա ամենեքին, բայց ի

---

19 Բարգեն կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիո ազգային մատենադարանի հայոց, Անթիլիաս, 1961, էջ 988։

20 Հ. Ն. Ակինյան, «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 1957 թ., 11—12, էջ 525։

21 Կարապետ եպիսկոպոս, Յովհան Մանդակունի և Յովհան Մայրագոմեցի, «Շողակաթ», էջմիածին, 1913, էջ 111—112։

Յոհանայ և ի նորին աշակերտացն, որ ոչ հնազանդեցան, անկան ի րանդ ե ի պատուհաս և ի հալածանս ի Ներսիսէ Տայեցւոյ Հայոց կաթողիկոսէ»[22]։

Թվում է, թե ճիշտը այսպես հասկանալն է՝ աշակերտներն են հալածվել Ներսես կաթողիկոսից և ոչ թե Հովհանը։ Հովհանը, ինչպես հայկական բոլոր մյուս աղբյուրներն են նշում, քաշվել է Գարդմանի գավառը «և անդ ապա խստամբեր վարս իւր ստացեալ՝ նեղ և անձուկ պողոտայիւ հետևի զկնի ամենայն առաքինի վարուց»[23] կամ՝ «Եւ երթեալ Յովհաննու ընտրեաց իւր տեղի լռութեան ի կողմանս Գետաբակս բերդոյ, և անդ ղաղարեալ՝ հանապազ ընդ աստուա-ծոյ խօսելով»[24], և՝ «իսկ նորա ղնացեալ ի Գարդման անդ կատարէ զկեանս իւր առաքինաջան հանդիսիւ։ Զմանէ համբաւի հերձուած մուծանել յեկեղեցի՝ որ ոչ է սորա, այլ ումն Սարգիս անուն յաշկերտաց նորա արար զայն, զոր հալածեաց Յովհան յիւրմէ»[25]։

Ինչպես տեսնում ենք, Հովհանը Դվինից հեռանալուց հետո, 60-ն անց մի ծերունի, ճգնակյացի վարքով անց է կացրել իր օրերը, հեռու կրոնական բարձր ոլորտներին հուզող հարցերին միջամուխ լինելու ձգտումից, ուսուցանում էր, հորդորական ճառեր գրում և սրբի հռչակով մահանում ազգային ավանդներին խիստ հավատարիմ Գարդմանի գավառում, որտեղ նույնիսկ նրա հետ կապված մի ավանդություն էլ է հյուսվում, որը մեջ ենք բերում կարծելով, որ այդ ավանդության Գարդմանում կյանք ստացած լինելը ինչ-որ բան, այնուամենայնիվ, նշանակում է. «Եցոյց աստուած և մեծ սքանչելիս վկայ լինել սրբութեան նորա. զի էր նորա էշ մի, որ սպասաւորէր զպէտս նորա. պատահեաց նմա արջ մի և եկեր զնա։ Եւ իբրև ասացին Յովհաննու, երթեալ ասէ ցարջն. «Որովհետև սպաներ զսպասաւորն մեր, արդ՝ փոխանակ նորա, դու սպասաւորեա՛ մեզ»։ Եւ երթեալ արջուն՝ սպասաւորէր ամենայն հնազանդութեամբ ի բեռնակրութիւնս և յամենայն ինչ ամս բազումս։ Եւ յետ ժամանակաց պատահեալ որսորդաց՝ սպանին զարջն, կարծելով վայրենի զնա։ Եւ իբրև տեսին եղբարք վանիցն՝ ընկեցին զնա ի խորափիտ մի։

Մինչև ցայսօր բնակիչք վայրացն երթան և առնուն հող ի տեղւոյէն, յորում թաղեցաւ արջն. և լինի դեղ ամենայն ցաւոց անասնոց աղօթիւքն Յովհաննու։ Նոյնպէս և գերեզման սրբոյն դեղ է ամենայն ցաւոց և վտանգելոց, որք հաւատով ապաւինին յաղօթս սրբոյն»[26]։

Արջի հետ կապված այս ավանդությունը կարող էր ծնվել Հայաստանի լեռնային ու անտառոտ այն շրջաններում, որտեղ արջը շատ հարազատ է։ Այդպիսի շրջաններից է Գարդմանը, ուր քաշվեց Հովհանը Եզրի հետ գժտվելուց հետո և սրբի հռչակ վայելեց այդ գավառում։ Այդտեղ Հովհանի մահանալու հետ համաձայն են հայկական սկզբնաղբյուրները։

Փոտը և Narratio-ն, սակայն, հաղորդում են, որ Անաստաս կաթողիկոսի մահից հետո (668 թ.) Հովհանը վերադարձել է Հայաստան և վախճանվել խոր ծերության մեջ։ Արսեն Սափարացին, ինչպես արդեն ասացինք, մահվան որոշակի թվականն էլ է ասում՝ 684 թվականը։ Այս թվականն էլ Հ. Կ. Քիպարյանը համարում է ամենաարժանահավատը, որովհետև, վերջին հաշվով, միակ ասված թվականն է։ Հ. Կ. Քիպարյանը այսպես է հիմնավորում իր կարծիքը. «Իրապես երկու օտար լեզվով աղբյուրներն ալ կրնղունին թե Մայրավանեցի դարձած է իր աքսորեն Անաստաս կաթողիկոսի (662—668) մահեն վերջ, ըսել է 668-են հետո, ու տարիներ վերջ մեռած է շատ ծեր. իսկ Սափարացիի վկայության համաձայն՝ Հոհան մեռած է ՃԼԳ թվականին, այն է 684-ին։ Սափարացիի մեզ ընծայած այս թվականին նկատմամբ տարակուսելու որևէ հիմք չունինք. թվական մըն է, որ հնարելու հատուկ պատճառ չուներ, մանավանդ թե այդ թվականով առանց անդրադառնալու ինքն իր գրածին կը հակասե։ Ենթադրելով որ Մայրավանեցի ութսունամյա վախճանած ըլլա, իր ծնունդը պետք ենք դնել 605-ի ատենները, արդ 605-ի ծնունդ մը չէր կարող Կոմիտասի կաթողիկոսության (615—628) շրջանին հրապարակի վրա ազդեցիկ դեր մը կատարել»[27]։

---

22 Պատմութիւն Յոհաննու Մայրագոմեցւոյն, «Արարատ», 1917։

23 Յովհաննես Կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 77—80։

24 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 54—56։

25 Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 77—78։

26 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 56։

27 Հ. Կ. Քիպարյան, Յոհան Մայրավանեցի (կոչված նաև Մայրագոմեցի), «Բազմավեպ», Վենետիկ, 1963 թ., էջ 234—235։

Այս եզրակացության բերող փաստարկումները համոզիչ չեն։ Ահա թե ինչու։ Բոլոր սկզբնաղբյուրներն, առանց բացառության, հաղորդում են, որ Կոմիտաս կաթողիկոսի օրոք նշանավոր դեմք էր Հովհաննը։ Սրան չենք կարող չհավատալ։ Այս տվյալը պետք է հիմք ծառայի տարիքի որոշման և ոչ թե միայն Արսեն Սափարացու մոտ հանդիպող, թեև որոշակի ասված, բայց ոչ մի աղբյուրի հետ չհամաձայնվող մահվան թվականը։ Սափարացին այդ թվականը հնարելու պատճառ զուցե և չուներ, բայց բոլորին թողած նրան միայն հավատալու պատճառ բնավ չունենք։

Կարապետ եպիսկոպոսի ենթադրությունը, որ 652 թվականին Հովհան Մայրագոմեցին արդեն վախճանված էր, մի փաստով ավելի հավաստի է դարձնում Թ. Ավդալբեգյանը։ Նա իր «Զվարթնոցի շուրջը» հոդվածում[28], բանասիրական հետաքրքիր հետաքննությամբ հերքում է Գ. Լևոնյանի այն ենթադրությունը, որ կարող էր Հովհան Մայրավանեցին լինել Զվարթնոցի ճարտարապետը։ Ի շարս այլ և այլ փաստարկումների, նա բերում է նաև Սեբեոսից մի հատված՝ Հովհանի մահվան թվականը մոտավորապես ճշգրտող։ Թ. Ավդալբեգյանը գրում է. «Այս մասին ունենք Սեբեոսի անառարկելի վկայությունը, որի վրա ուշք չեն դարձրել բանասերները։

Նա պատմում է, թե ինչպես 652 թվականին Դվնի Ս. Գրիգոր եկեղեցում, Կոստանդին կայսեր ներկայությամբ, «քարողեցավ ժողովն Քաղկեդոնի... և մատեաւ պատարագ հոռոմերէն ի հոռոմ երիցուէ», և թէ «հաղորդեցաւ թագաւորն և կաթողիկոսն և ամէն եպիսկոպոսանին», ապա ավելացնում է. «Առ մահուն երկիւղիւ ամենեքեան զհրամանս հաղորդութեանն կատարէին՝ մանաւանդ զի մեռեալ էին երանելիքն՝ որք էին հիմնաւորագոյնք»։

Հայ հոգևորականների թուլությունն այստեղ բացատրվում է նրանով, որ մեռել էին նրանց տեսաբան պաշտպանները։

Ովքե՞ր էին սրանք։ Դարձյալ Հովհաննն ու Մաթուսաղան։ Վերջինս մահվան թվականը վերջնականապես ստուգված չի կարելի համարել, բայց ստույգ է, որ Այունյաց այս եպիսկոպոսը 652-ի մոտերը մեռած էր արդեն։ Թ. Ավդալբեգյանը այստեղ հենվում է Ստ. Օրբելյանի «Պատմության» տվյալների և Օրմանյանի հաշվումների վրա ու եզրակացնում. «Այս հաշիվներով ստանում ենք Մաթուսաղայի մահվան ժամանակի եզրերը միայն, որ են 647—652 թվականները։

Այսպիսով, ճշտվում է Սեբեոսի ասածը, թե «հիմնաւորագոյն»-ներից մեկը՝ Մաթուսաղան մեռած էր 652 թվականին։ Սրանով հաստատվում է մյուս «հիմնաւորագույնի»՝ Հովհան Մայրավանեցու մասին ասածն էլ. վերջինս էլ մեռած էր Դվնի միաբանությունից առաջ»։

Այս եզրակացությունը ամենից ավելի է համապատասխանում իրականությանը։ Ինչպես տեսանք արդեն, հայկական աղբյուրներն էլ Սեբեոս Շինողի օրոք Հովհանի գործունեության մասին որևէ հիշատակություն չեն անում։ Իսկ օտար աղբյուրների այն հաղորդումը, որ նա աքսորից վերադարձավ Անաստասի մահից հետո և խառնակություններ արեց, շփոթություն է և, ինչպես Կարապետ եպիսկոպոսն է ասում, վերաբերում է աշակերտների արածներին։

Մատենաղրական հնաղույն տվյալներից մեկի համաձայն (Մովսէս Կաղանկատվացի)[29] Մեծ կողմանց եպիսկոպոս Դավիթը դիմում է հայոց կաթողիկոսարան՝ խորհուրդ հայցելով Աղվանից աշխարհում հայտնված հերձվածողների մասին, որոնք պատկերները չեն ընդունում, մերժում են մկրտությունը, ագի օրհնությունն ու հարսանեկան պսակադրությունը։ Հովհան Մայրագոմեցին պատկերամարտության մասին հանգամանալից բացատրություն է տալիս և ասում, թե ինչպես Արրահամ կաթողիկոսի դահակալության օրերին, երբ Գարղմանի իշխանը շղթայակապ Հայաստան ուղարկեց երեք պատկերամարտների, ինքը՝ Հովհանը, նրանց բացատրեց, թե ինչու չպետք է խոտել պատկերները և նրանք հրաժարվեցին իրենց «մոլորությունից»։

Համաձայն Ստեփանոս Ասողիկի վկայության, Կոմիտաս կաթողիկոսի ժամանակ «փայլէր վարդապետութեամբ Յոհան Մայրագոմեցի։ Սա գրեաց երիս գիրս ե զանուն իւր ոչ վերագրեաց ի նոսա, վասն չընդունելոյ ժողովրդեանն. անուն միոյն՝ Խրատ վարուց, և անուն միւսոյն Հաւատարմատ, և անուն միւսոյն՝ Նոյեմակ»[30]։

Կարապետ Տեր-Մկրտչյանը «Կնիք հաւատոյ» ժողովածուի կազմողը իրավացիորեն համա-

---

28 Թ. Ավդալբեգյան, Զվարթնոցի շուրջը, «Էջմիածին», 1958, հ. 4, էջ 31—38։

29 Մովսիսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, գլ. ԽԶ

30 Ստեփանոսի Տարօնեցւոյ Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 87—89։

ում է Մայրագոմեցուն և համոզիչ կերպով ժողովածուի 1914 թվականի հրատարակության ներածությունում ցույց է տալիս այդ։

«Պատմութիւն Յոհաննու Մայրագոմեցւոյն» գրվածքից իմանում ենք, որ Քրիստափորի կաթողիկոսության ժամանակ, նախքան Կարնո ժողովը, ասորիների հետ միաբանության փորձեր են կատարվել և Սիւնիքից Թեոդորոսն է եղել դրա եռանդուն կազմակերպիչներից մեկը, իսկ Հովհանը կաթողիկոսից բացատրություն է պահանջել, այսինքն ընդդիմադիր կողմ է եղել։ Դժբախտաբար, «Պատմությունը», ինչպես արդեն ասացինք, հասել է կիսատ և եկեղեցիների միաբանության այս չափազանց կարևոր հարցի լուսաբանման հնարավորությունից զրկված ենք։ Եղածը, սակայն, հետաքրքիր է նրանով, որ Կարնո ժողովի նախապատրաստության մասին տեղեկություն ունենալուց բացի, տեսնում ենք, որ Հովհանին Կարին՝ ժողովի չտանելը վերջին պահին ընդունված որոշում չէր, այլ նոր ձեռնարկված եկեղեցական քաղաքականության անհրաժեշտ քայլերից մեկը։

«Հացունյաց խաչի» պատմության մեջ Հովհանի մասին ասվում է. «Եւ անդ էր Յոհան Մայրագոմեցի, այր փիլիսոփայ և արքայն (Հերակլը— Հ. Ք.) սիրէր զնա վասն սրբութեան իւրոյ»։ Հերակլի պարսից դեմ տարած հաղթանակին անմիջապես հաջորդող օրերին Հովհանը տակավին արքայի սերն է վայելում։ Մեկուսացնել սկսում են նրան, այն էլ հայերը, երբ եկեղեցիների միության հարցը դառնում է անխուսափելի։ Կարնո ժողովից հետո Եզրը նրան հեռացնում է կաթողիկոսարանից, Հովհանը գնում է Գարդման, որտեղ նրա հեղինակությունը անվերապահորեն ընդունվում էր դեռևս Աբրահամ կաթողիկոսի ժամանակ։ Ինչպես տեսանք, Կիրակոս Գանձակեցու վկայության համաձայն, Հովհանը այստեղ էլ ապրել է մինչև իր կյանքի վերջը որպես ճգնակյաց։

7-րդ դարի առաջին 40 տարիների ընթացքում Հովհան Մայրագոմեցին եղել է հայ եկեղեցու ամենանշանավոր գործիչներից մեկը, Աբրահամ կաթողիկոսի օրոք հեղինակավոր անձ է, Կոմիտաս կաթողիկոսը գործերն է վստահել նրան, Եզրի դահակալության սկզբին նա վայելել է Թեոդորոս Ռշտունու վստահությունը և հայոց իշխանը հանձնարարել է Եզրին առանց Հովհանի ու Մաթուսաղայի չգնալ բանակցություններ վարելու բյուզանդացիների հետ, սակայն հայ-բյուզանդական քաղաքական հարաբերությունների առկա վիճակը պատճառ է դարձել, որ Հովհանը մեկուսացվի։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПО БИОГРАФИИ ИОАННА МАЙРАГОМЕЦИ

А. М. КЕНДЕРЯН

Резюме

В статье исследуются некоторые спорные вопросы, относящиеся к биографии видного древнеармянского писателя и мыслителя Иоанна Майрагомецн. На основе историографических данных и филологических изысканий устанавливается, что Иоанн Майрагомеци родился между 575—580 годами, место рождения предположительно — Византийская Армения, место захоронения—село Гетабак области Гардман.

Наиболее бурный период деятельности Иоанна Майрагомецн относится к годам правления католикосов Абраама и Комитаса, т. е. к 607—628 гг. Автор выдвигает новую гипотезу о происхождении прозвища писателя.